

**ՍԱՌՄԱՆՎՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՊԱՇՈՎՄԱՆ ԱՐԴԻ
ՄԱՐՏԱՎՐԱՎԵՐՆԵՐԸ**

(Զեկույց Երեւանյան XIV միջազգային խորհրդաժողովում)

Գ.Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ – ՀՀ ՍԴ նախագահ, պրոֆեսոր

Միջազգային խորհրդաժողովի հարգելի մասնակիցներ,

Նարցերը, որոնց կցանկանայի անդրադառնալ սույն խորհրդաժողովի քննարկումների շրջանակներում, պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի.

Նախ՝ որոնք են անցումային հասարակական համակարգերում հանրային կյանքի սահմանադրականացման հիմնական խոչընդությունները, Սահմանադրության գերակայության երաշխավորման գլխավոր մարդարավերները, եւ ինչպես դրանք բացահայտել, գնահատել ու հաղթահարել,

Երկրորդ՝ ինչ նպասգ կարող է բերել այս գործին պառամենքների եւ սահմանադրական դարպարանների արդյունավետ համագործակցությունը:

Մի շարք միջազգային խորհրդաժողովներում ես առիթներ ունեցել եմ անդրադառնալ այդ հարցերին՝ խոսելով վերափոխվող համակարգերի արժեքանական առանձնահավաքությունների, իներցիոն գործընթացների, սահմանադրական հիմնարար արժեքների դարպանույթ ձեւախեղումների մասին: Այսօր ցանկանում եմ հիմնական ուշադրությունը իրավիրել դրանց համակարգային բնույթի ու դեռևս հաղթահարման միզում չդրսեւորող պարբռների, ինչպես նաև առկա մարդարավերներին ոչ համարժեք սահմանադրական մշակույթի փասփի վրա:

Սահմանադրության գերակայության ապահովումն ամենից առաջ ենթադրում է սահմանադրական մշակույթի համարժեք մակարդակ: Ընդհանրապես **յուրաքանչյուր ազգի մշակույթը նրա իմաստավորված գոյությունն է ժամանակի մեջ: Իսկ սահմանադրական մշակույթը՝ պերականության իմաստավորված գոյության վկայությունն է: Սահմանադրական մշակույթը բնութագրում է նաև սահմանադրական սուբյեկտների ու ինսպիրությունների փոխհարաբերությունների որակն ու մակարդակը, միմյանց նկարմամբ իրավական վերաբերմունքի «հասունության» ասդիճանը:**

Սահմանադրական մշակույթը՝ լինելով սոցիալական հանրության արժեհամակարգային ճանաչողության արդարացման պայմանավորված է մի շարք գործոններով, մասնավորապես՝

- հասարակության զարգացման միզումներով եւ մարդու սոցիալական արժեվորման ասդիճանով,

- մարդ-հասարակություն փոխարաբերությունների բնույթով,
- սոցիալական հանրության արժեհամակարգային առաջնահերթություններով,
- արդարական հարաբերությունների զարգացման մակարդակով,
- մարդու սոցիալական պաշտպանվածության ասդիճանով,
- հասարակական երեւույթների ու օբյեկտիվ օրենքների իրավափիլիսոփայական ճանաչողության ու ընկալման մակարդակով,
- հասարակության քաղաքական մշակույթի ու իրավագիրակցության ասդիճանով,
- հասարակական համաձայնության կայացման սոցիալ-քաղաքական նախադրյալ-ների առկայությամբ,
- պետական իշխանության գաղափարաբանական կողմնորոշմամբ եւ հասարակության ճակարտագի համար պատասխանարվության գիրակցման ասդիճանով,
- համընդիանուր արժեքների ներազդեցության բնույթով եւ ազգային ինքնության որակների հետ դրանց ներդաշնակման ասդիճանով ու հնարավորությամբ,
- համակարգային կայունության էկոնոմիկ (արդարական) եւ էնդոգեն (ներծին) գործոնների ազդեցության բնույթով եւ այլն:

Սահմանադրական ճարդարապետության կարեւորագույն խնդիրն այն է, որպեսզի սահմանադրական կոնկրետ լուծումներն երաշխավորեն սահմանադրական մշակույթի անհրաժեշտ ու բավարար մակարդակ, որի պայմաններում սահմանադրական նորմերը գործեն լիարժեք ու երաշխավորվի Սահմանադրության ինքնաբավությունը, այն դառնա ապրող իրողություն եւ հասարակության յուրաքանչյուր անդամի սոցիալական արժեհամակարգի, հասարակական համաձայնության ու հանդուրժողականության հենքը: Նման մշակույթի բացակայությունը Սահմանադրությունը վեր է ածում կամ գեղեցիկ ձևակերպումների ու բարի ցանկությունների ժողովածուի, կամ գործիքի, կառավարման լծակի, որը գործադրվում է իշխանության ցանկությամբ ու իրեն անհրաժեշտ խնդիրների լուծման շրջանակներում: Սա կործանման, անվարակության ու անհանդուրժողականության արմադավորման ճանապարհն է: **Այս ճանապարհի բացառումը Սահմանադրության գերակայության երաշխավորման թիվ մեկ մարդարավերն է:**

Վերոնշյալ գործոնների լոկ թվարկումը վկայում է, որ գործ ունենք բարդ ու բազմաշերտ խնդրի հետ, որի թերագնահարումն իսկ լի է լուրջ վրանգներով: Իսկ դառն իրողությունն այն է, որ անցումային երկրներում թե՛ պետական եւ թե՛ հասարակական մրածողության մակարդակներում պարզունակ մոփեցում է դրսեւորվում սահմանադրական մշակույթի բարձրացման ու Սահմանադրության գերակայության երաշխավորման հարցերին, որի արդյունքում թեկուց հարվածական լուծումներն անհամարժեք են դառնում ժամանակի ներած մարդարավերներին եւ չեն երաշխավորում հասարա-

կական հարաբերությունների սահմանադրականացման գործընթացի անընդհապությունն ու անհրաժեշտ մակարդակը:

Ժողովրդավարացման նոր ալիքը 90-ականների սկզբից նորանկախ երկրների առջեւ դրեց չափազանց բարդ մի խնդիր՝ սահմանադրական զարգացումները երաշխավորել ոչ թե էվոլյուցիոն զարգացման արդյունք հանդիսացող սահմանադրությունների, այլ, այսպես կոչված, արեւմբանվրոպական եւ ամերիկյան սահմանադրական արժեքանության վրա խարսխված մոդելային սահմանադրությունների հիման վրա: Սա, վերջին հաշվով, սահմանադրական հիմնարար արժեքների փրանսպլանվացիա էր ենթադրում: Այլընդրանք պարզապես գոյություն չուներ: Դա, իր հերթին, ենթադրում էր հասարակական հարաբերությունների լուրջ նախապարհապում նման բարդ «վիրահապության», դրա խելամիտ ու պրոֆեսիոնալ իրականացում, վերականգնողական լուրջ գործընթաց: Ցավոք, փասփն այն է, որ նորանկախ երկրներից շափերը պարզած չգնահագեցին խնդրի բարդությունը, վերոնշյալ գործոնների ծրագրանպարակային հաղթահարման անհրաժեշտությունը, գնացին մեխանիկական պարճենահանման ճանապարհով, եւ այսօր կանգնած են սահմանադրական հիմնարար արժեքների փարաբնույթ ձեւախեղումների փասփի առաջ, **որի հաղթահարումը Սահմանադրության գերակայության երաշխավորման հաջորդ հիմնական մարդարավերն է:**

Որն է ելքը:

Ամենից առաջ անհրաժեշտ է սահմանադրական ախտաբանության ու վերահսկողության գործուն համակարգ, որը հնարավորություն կփա պերական իշխանության ու հանրային գիրակցության մակարդակում **համարժեք գնահապել** առկա մարդարավերներն ու դրանց հաղթահարման երկարաժամկետ համալիր ծրագիր իրականացնել: Նախ. պետք է նկարի ունենալ, որ Սահմանադրությունն ամենից առաջ անհրաժեշտ է հասարակական համաձայնության միջավայր ստեղծելու, անվարակությունն ու անարդարությունը հաղթահարելու, մարդու իրավունքներն ու սեփականությունը երաշխավորված պաշտպանելու համար: Ուստի Սահմանադրության գերակայության երաշխավորումը միջոց ու հնարավորություն է իրավունքի գերակայությունը երաշխավորելու համար:

Սա իշխանության բոլոր թեևների համար **թիվ մեկ դասն է**, որը պետք է դառնա սահմանադրական ժողովրդավարության հասպարման գիշավոր կարգախոսը:

Սահմանադրության գերակայությունը միայն սահմանադրական նորմերի բարձրագույն իրավաբանական ուժով պայմանավորելը բավարար չէ այս բարդ ու բազմաշերպ խնդրի մասին ամբողջական պարկերացում ունենալու համար: Սահմանադրության գերակայության երաշխավորումը, վերջին հաշվով, մարդկանց արժեքանական կողմնորոշումների հիմքում սահմանադրական հիմնարար արժեքների արմադավորումն է: Թեևուզ

Հայաստանի օրինակն սպեղծված դժվարին իրավիճակի ցայքուն դրսեւորում կարելի է դիմագրել: Դարավոր կորսպից հետո մենք ձեռք ենք բերել մեր քաղաքական անկախությունը: Վրդեն 15 դարի է ունենք անկախ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն: Սպեղծել ենք պետականության խորհրդանշերը: Սակայն չունենք զիսավորը՝ պետության քաղաքացուն: Մենք չենք հաղթահարել բնակիչ-քաղաքացի անջրապետը, քանի որ մեր երկրի բնակիչների գերակշիռ մասն իրենց ներսում դեռևս անհրաժեշտ ու բավարար քաղաքացիական որակների ու արժեքների կրող չեն: Իսկ դրանք չեն սպեղծվում կախարդական փայտիկի ուժով, առավել եւս՝ պետականության դարավոր կորսպի հետեւանքով առաջացած ձեւախեղումների պարագայում, այլ միայն կարող են երկարագել ծրագրա-նպատակային ու հետեւողական աշխաբանքի արդյունք լինել:

Սահմանադրության գերակայության երաշխավորման հաջորդ խնդիրը **պետական իշխանության բոլոր բոլոր մակարդակներում անհրաժեշտ սահմանադրական վարքագծի արմագավորումն** է: Այդ վարքագծի մակարդակը հասարակական հարաբերությունների սահմանադրականացման կարեւոր չափանիշներից մեկն է: Նման վարքագծի արմագավորումը նույնպես համալիր աշխաբանք է պահանջում: Իրականությունն այն է, որ, ցավոք, դեռևս Սահմանադրության առնչությամբ կենսունակ է խորհրդային մրածողությունն ու հոգեբանությունը: Հակառակ դեպքում ինչպես կարելի է գնահատել այն փաստը, երբ քաղաքացիների դիմումների հիման վար միայն վերջին երկու դարում Հայաստանի սահմանադրական դարարանն ավելի քան քսան գործերով օրենքների նորմերը ճանաչել է հակասահմանադրական, սակայն այդ նույն ժամանակահավածում **ՌՌ կառավարությունը, ՌՌ Ազգային ժողովի պարզամավորները, գեղական ինքնակառավարման մարմիններն իրավական ակդերի սահմանադրականության հարցերով գրեթե սահմանադրական դարարան չեն դիմել, իսկ այդ նորմերը Սահմանադրությանը հակասող են ճանաչվել դարարանների կողմից քաղաքացիների նկարմամբ կիրառվելուց հետո:**

ՌՌ սահմանադրական դարարանը նախորդ դարվա իր դարեկան հաղորդման մեջ հարուկ ուշադրություն հրվիրեց այն հանգամանքի վրա, որ սահմանադրական դարարան դիմելու իրավունքը դիմող սուբյեկտների համար ոչ միայն հայեցողական լիազորություն է, այլև ենթադրում է որոշակի պարտավորություն՝ երկրում սահմանադրական օրինականություն հասդարելու եւ Սահմանադրության գերակայությունը երաշխավորելու հարցում:

Ներկայում առավել քան իրավապ են դաշնում նաեւ Սահմանադրության գերակայության երաշխավորման խնդիրները՝ Սահմանադրության անմիջական գործողության ապահովման ճանապարհով: Բանն այն է, որ իրավակիրառական պրակտիկայում

հաճախ չեն փարբերակվում «Սահմանադրության անմիջական գործողություն» եւ «սահմանադրական նորմի անմիջական կիրառում» հասկացությունները: Նստակ փարբերակման անհրաժեշտություն ունեն նաև «...մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքները եւ ազագությունները՝ որպես անմիջական գործող իրավունք» («Սահմանադրություն, հոդվ. 3) եւ «Սահմանադրության նորմերը գործում են անմիջականորեն» (հոդվ. 6) հասկացությունները: «...Մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքները եւ ազագությունները՝ որպես անմիջական գործող իրավունք» դրույթն անհնարին է առանձին մեկնաբանել՝ կիրելով սահմանադրական այն դրույթից, որ պետքությունը սահմանափակված է այդ իրավունքներով եւ ազագություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք: Վերջինս իր հերթին ենթադրում է, որ այդ իրավունքներն են պայմանավորում օրենքների բնույթը ու բովանդակությունը, դրանց կիրառումը, ինչպես նաև օրենսդիր, գործադիր իշխանության, գլուխական ինքնակառավարման մարմինների գործունեությունը եւ ապահովում են արդարադարձության կողմից: Այսպեսից հետեւում է, որ Սահմանադրության արժեքանության հիմքում դրված իրավունքի գերակայության սկզբունքը պարփակորեցնում է օրենսդրին՝ երաշխավորել այդ իրավունքները, դրանք դնելով օրենսդրության հիմքում, գործադրին՝ չխախվել այդ իրավունքները, դադարական իշխանությանը՝ ապահովել ու պաշտպանել դրանք: Այս պարփակորությունները պետք է դառնան իշխանության բոլոր ինսպիրուվների գործառույթների իրականացման հիմնական բովանդակությունը:

Սահմանադրական նորմերի անմիջական կիրառումը բոլորովին այլ իմաստ ունի: Մասնավորապես, դադարական իշխանության կողմից պարզապես սահմանադրական նորմին հղում կարարելը բավարար չէ այն կիրառում կոչելու համար: Անհրաժեշտ է, որ դադարական ապահովի եւ պաշտպանի սահմանադրական իրավունքը կամ սահմանադրական նորմը հիմք ընդունելով՝ իրականացնի արդարադարձություն: Այս պարփականությամբ է պայմանավորված նաև դադարական իշխանության դադարական դիմումների կողմից սահմանադրական դադարական դիմումներու անհրաժեշտությունը:

Նաջորդ հիմնախնդիրը, որի վրա ցանկանում էի ուշադրություն իրավիրել, վերաբերում է անմիջականորեն «Ազգային ժողովի եւ «Սահմանադրական դադարական գործառնական փոխհարաբերությունների փորձին: Ես այն կներկայացնեմ հիմնական խնդրի լուծման՝ սահմանադրական դադարականի որոշումների իրացման, գլուխական դադարական մեջ վաղուց արդեն վեճի առարկա չէ, որ սահմանադրական դադարականների որոշումները կարեւոր իրավունքի աղբյուր են, մեծ դեր են կադարձում օրենքի բացի հաղթահարման եւ Սահմանադրության ինքնարավության երաշխավորման գործում: Այսօր նույնիսկ ամերիկյան Սահմանադրությունը գործնական որեւէ արժեք չէր կարող ներկայացնել առանց Դաշնային գերազույն դադարականի 540 հավորից անցնող

մեկնաբանությունների: Մեզանում, ցավոք, մինչեւ վերջերս բոլորովին այլ իրողություն գոյություն ուներ: Նոյնիսկ պերական բարձր մակարդակներում, այսպես կոչված, մեղադրանք էր հնչեցվում, թե ինչպես կարող է սահմանադրական դափարանը մեկնաբանել Սահմանադրությունը: Բարեբախսդարար, ներկայումս նկատելի է իրավիճակի լուրջ փոփոխություն: Դա դեղի ունեցավ նախ՝ 2005թ. սահմանադրական բարեփոփումների արդյունքում: Սահմանադրության գերակայության երաշխավորման պերական նոր մրածողության դրսեւորում էր նաև այն, որ 2008թ. ՀՀ Ազգային ժողովի նախագահի նախաձեռնությամբ սփեղծվեց պարզամավորներից եւ Ազգային ժողովի աշխափակազմի աշխափակիցներից կազմված հագուկ աշխափանքային խումբ, որը քննարկման առարկա է դարձնում օրենքի սահմանադրականության հարցով սահմանադրական դափարանի յուրաքանչյուր որոշում եւ առաջարկություններ է նախապարտասպում օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու վերաբերյալ: Վյդ առաջարկությունների հիման վրա 2008թ. վերջին հրավիրվեցին նաև Ազգային ժողովի արդարադարձ երկու նիստեր ՀՀ դափարական օրենսգրքերում եւ դափական օրենսգրքում սահմանադրական դափարանի իրավական դիրքորոշումներից քիող փոփոխություններ կարարելու համար:

Արվածի հետ մեկնեղ, առկա են նաև լուրջ հիմնախնդիրներ: Սահմանադրության գերակայության երաշխավորման դեսանկյունից սահմանադրական բարեփոփումներն իրականացվեցին թերի ու անկարար: Չերաշխավորվեց սահմանադրական արդարադարության համակարգային ամբողջականությունն ու գործառնական անկախությունը: Մարդու սահմանադրական արդարադարության իրավունքի իրացումը լիարժեք ձեւով չափահովվեց:

Այս հարցն այսօր առավել քան հրափառ է դարձել եվրոպական շաբ երկրների համար, եւ նախափեսվում է անհափական դիմումների ինսպիրուտիվի եվրոպական զարգացումների միգումները հագուկ քննարկման առարկա դարձնել Վենեպիկի հանձնաժողովի առաջիկա լիազումար նիստերից մեկում: Վենեպիկի հանձնաժողովի եւ Մարդու իրավունքների եվրոպական դափարանի նախագահի հետ ձեռք բերված նախնական պայմանավորվածության համաձայն այս հիմնախնդիրը քննության առարկա կդառնա նաև եկող գարվա Երեւանյան միջազգային խորհրդաժողովում:

Թեման չափազանց հրափառ է, որովհետեւ այս հարցում Եվրոպայում առկա մոլորումները խիստ գարբեր են, եւ դրանք պայմանականորեն կարելի է բաժանել երեք խմբի. ա) լիարժեք համակարգի առկայություն (Գերմանիա, Իսպանիա, Չեխիա, Ալժիր և այլն), բ) սահմանափակ, միայն օրենքի սահմանադրականության հարցի շրջանակներով սահմանափակված համակարգի առկայություն (Ռուսաստանի Դաշնություն, Լեհաստան, Հայաստան և այլն), գ) այդ ինսպիրուտիվի իսպառ բացակայություն (Ֆրանսիա, Լիբիա, Մոլդովա և այլն): Նման վիճակն օրակարգային անհրաժեշտություն

Է առաջացնում բացահայփել ու գնահապել այս ոլորտում Եվրոպական զարգացումների հիմնական միգրումներն ու Եվրոպական իրավական չափանիշներին համապատասխանող համակարգային լուծումները,

Բացի դրանից, մարդու իրավունքների պաշտպանության վերաբերական ինսպիրությունների գործունեության արդյունավետությունը նույնպես մեծապես պայմանավորված է ազգային համակարգերի գործունակությամբ: Դա առաջին հերթին վերաբերում է Մարդու իրավունքների Եվրոպական դադարանին:

Պակաս կարուոր չէ եւ այն հանգամանքը, որ անհապական դիմումների միջոցով ոչ միայն պաշտպանվում են կոնկրետ անձի իրավունքները, այլև անձը գործուն մասնակիցն է դառնում հասարակական հարաբերությունների սահմանադրականացմանը, որոշակի առումով իրականացնում է անմիջական ժողովրդակիշխանության իր իրավունքը: Ցանկացած անհապական դիմում ունի նաև հանրային որոշակի հետաքրքրություն:

Թեև սահմանադրական անհապական գանգափի ինսպիրութը բացառիկ կարևորություն ունի մարդու իրավունքների և ազագությունների պաշտպանության դեսանկյունից, սակայն այդ բնագավառում վերջինիս դերը կարող է գործուն համարվել, իսկ գործունեությունն արդյունավետ սուկ այն դեպքում, եթե այն լիարժեք է ներդրված և գործում է այդ ինսպիրութի արդյունավետությանը նպաստող անհրաժեշտ ու բավարար կառուցակարգերի ու դադարական ընթացակարգերի շրջանակներում:

Ընդհանրապես խախիված սահմանադրական հավասարակշռությունը հնարավոր է ժամանակին բացահայփել, գնահապել ու հաղթահարել միայն սահմանադրական արդարադարձության լիարժեք համակարգի արմադավորման պարագայում: Վյդպիսի համակարգի էվրոպային օրինակ կարող է ծառայել Գերմանիայի Դաշնության սահմանադրական արդարադարձության համակարգը: Վյն դասական օրինակ կարող է ծառայել Երիտրասարդ ժողովրդավարությունների համար: Դրանից շեղումները, մեր խորին համոզմամբ, կարող են վկայել միայն համակարգային անկարարության ասթիճանի մասին, որի հաղթահարումը պետքության իրավական անվտանգության առանցքային խնդիրներից է եւ այս հարցում մեծ դերակարգություն ունեն ազգային խորհրդարանները:

Ընորհակալություն ուշադրության համար: